ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ԹԻՎ 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Ջերմուկի Մ. Գորկու անվան թիվ 1 հիմնական դպրոց

Թեմա՝ Ինքնուրույն ընթերցանության կազմակերպման մեթոդները

Վերապատրաստող մենթոր՝ Աիդա Խալաթյան

Ուսուցիչ՝ Լիա Աբրահամյան

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
ԳԼՈՒԽ 1. ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ 6
ԳԼՈՒԽ 2. ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ 10
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ 15
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 19
ՕԳԱՏԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մարդու բազմակողմանի զարգացման հիմքը դրվում է կրտսեր դպրոցում: Տարրական դասարանների մայրենի լեզվի դասընթացում առաջատար տեղ է գրավում ընթերցանությունը: Ժամանակակից զարգացող հասարակության մեջ ավելի ու ավելի դժվար է դարձել երեխային ստիպել գիրք կարդալ, այնուհանդերձ, գրքի դերը անձի զարգացման գործում մնում է անփոխարինելի: Աշխարհն արագորեն փոփոխվում է, դառնում ավելի ու ավելի շատ վիրտուալ, այդ պատճառով ընթերցանության խթանման ձևերը նույնպես պիտի փոխվեն և համապատասխանեն ժամանակի պահանջներին:

Ընթերցանություն նպատակն է՝

- զարգացնել աշակերտների կարդալու և պատմելու կարողությունները,
- խոսքը,
- հարստացնել նրանց ճանաչողական գիտելիքները
- զարգացնել բառապաշարը

Կրտսեր դպրոցականների ինքնուրույն ընթերցանության նպատակը՝ գրքի, ընթերցանության նկատմամբ կայուն հետաքրքրության արթնացումն է և այդ ճանապարհով նրանց մեջ անձնային դրական որակների ձևավորումը: Մայրենիի դասավանդման ընթացքում ուսուցողական նպատակներից բացի լուծվում են նաև դաստիարակչական լուրջ խնդիրներ՝ գեղագիտական ճաշակի, աշխատասիրության, ազնվության, ճշտապահության, բարոյական ու կամային մի շարք լավագույն հատկանիշների դաստիարակում և այլն: Այդ աշխատանքը իրականացվում է հիմնական երկու ուղղությամբ

- դասագործընթացում
- ինքնուրույն ընթերցանության միջոցով (ոչ դասագրքից): Եթե աշխատանքը ճիշտ է պլանավորված և կազմակերպված, ապա կրտսեր դպրոցականները ինքնուրույն ընթերցանությամբ պարբերաբար զբաղվում են թե դասարանում, թե դասի ժամանակ, թե դասից դուրս՝ տանը: Մեթոդապես ճիշտ և համակարգված ընթերցանության կազմակերպումը նպաստում է կրթադաստիարակչական մի շարք խնդիրների լուծմանը: Հասկանալով կարդալ, տիրապետել կրթության արտահայտչամիջոցներին, գրքով աշխատելով, որպես գիտելիքների բարոյական և գեղագիտական ինքնադաստիարակման, սովորելու կարողությունների մշակման հիմնական աղբյուրը:

Կարդալ չսիրող, գրքի, հեքիաթի, պատմվածքի ունկնդրման և ընթերցման նկատմամբ ի սկզբանե անտարբեր երեխաներ չեն լինում: Պարզապես անհրաժեշտ է մանկական ընթերցանության մանկավարժորեն ճիշտ և նպատակային կազմակերպում:

Գրքի նկատմամբ հետաքրքրությունը և սերը պահպանվում և զարգանում են, եթե առկա են որոշակի պայմաններ՝

1. Այն գիրքը, որի նկատմամբ մենք կամենում ենք երեխաների մեջ սեր և հետաքրքրություն առաջացնել, նրանց ձեռքին պիտի լինի մշտապես, ասել է, թե երեխան

պետք է շրջապատված լինի գրքերով: Եվ որքան գրավիչ լինի ձևավորմամբ ու բազմազան, այնքան մեծ կլինի երեխայի հետաքրքրությունը
2. Յուրաքանչյուր դասի ընթացքում գրքի հետ տարվող աշխատանքի բովանդակությունը խստորեն պիտի համապատասխանի երեխաների կարդալու կարողություններին, գիտելիքների փաստային մակարդակին և ճանաչողական հետաքրքրություններին:
3. Աշխատանքը գրքով պետք է կազմակերպել այնպես, որ բավարարի ամեն մի երեխայի հետաքրքրությունը:
Յուրաքանչյուր ուսուցչի անհանգստացնում է ճիշտ, գիտակցորեն, սահուն, արտահայտիչ ընթերցողական կարողությունների ձևավորումը, քանի որ ընթերցանությունը մեծ դեր է խաղում աշակերտի, անձի զարգացման և կրթության հարցում: Շատ ուսուցիչներ և ծնողներ անհանգստանում են, որ երեխան չի սիրում կարդալ: Մեր ժամանակներում գիտատեխնիկական առաջընթացը, հեռուստատեսությունը, համակարգիչը, համացանցը և տարաբնույթ համակարգչային խաղերը ճնշում են երեխայի հետաքրքրությունը:
Կարևոր է երեխաների մեջ հետաքրքրություն առաջացնել գրքի և գեղարվեստական գրականության նկատմամբ՝ սկսած առաջին դասարանից: Մեր օրերում դա այդքան էլ հեշտ չէ: Երեխաները չեն կարդում լրացուցիչ գրականություն, սահմանափակվում են միայն ծրագրային նյութերով:
Ինքնուրույն ընթերցանությունը մայրենիի ուսուցման բաղադրիչներից մեկն է և սովորողներին թույլ է տալիս զգալիորեն ընդարձակել ու խորացնել դասերի ընթացքում ձեռք բերած գիտելիքները: Այն աշակերտների մտահորիզոնի ընդլայնման, բառապաշարի հարստացման, գրական ճաշակի ձևավորման կարևորագույն միջոց է:
Ինքնուրույն ընթերցանությունը կոչված է բավարարելու տեղեկատվության բազմազան աղբյուրներից օգտվող, շատ բան իմանալ ցանկացող այսօրվա աշակերտի հոգեկան պահանջները: Գիրքը դաստիարակում է դպրոցականի հոգևոր աշխարհը, ձևավորում բարոյական արժեքներ: Հենց դրա միջոցով է իրականանում մի սերնդի հոգևոր արժեքների փոխանցումը հաջորդ սերունդներին:
Ցավոք մեր աշակերտների մեջ զգալի թիվ են կազմում գեղարվեստական գրականության նկատմամբ ոչ մի հետաքրքրություն չունեցող երեխաները: Դեռևս ոչ վաղ անցյալում գիրք ընթերցելը անհրաժեշտություն էր: Այսօր պատկերը այլ է:
Ինչպե՞ս սովորեցնել գիրք կարդալ, որպեսզի երեխան սիրի գիրքը: Բանն այն է, որ մանկական տարիքում կարդացած գիրքն ամբողջ կյանքում հիշվում է և ազդում մարդու մտավոր զարգացման վրա: Այս խնդիրը հատուկ նշանակություն է ստանում տարրական դպրոցում: Դասվարները գիտեն, թե երեխայի համար որքան դժվար է կարդալու տեխնիկային տիրապետելը, իսկ ավելի դժվար է՝ ձևավորել իսկական ընթերցող: Չէ՞ որ տառերի կապակցմամբ բառ կազմելը և կարդալը չի նշանակում դեռևս դառնալ ընթերցող: Գլխավորը ընթերցման կազմակերպումն է այնպես, որ այն խթանի անձի զարգացումը: Զարգացած անձը մշտապես կարիք է զգում ընթերցանության:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է ընթերցանության կարևորության ընդգծմամբ, որով խթանվում է սովորողների մոտ ընթերցանության ձևավորումը: Ընթերցասեր սերնդի դաստիարակությունը և հետևաբար ընթերցող

հասարակության ձևավորումն այսօր արդիական խնդիր է ամբողջ աշխարհում. այդ գործընթացում մեծ է ինքնուրույն ընթերցանության բաղադրիչի կատարած դերը, քանի որ աշակերտի մեջ գրքի նկատմամբ սեր սերմանելու և դրա շնորհիվ ճանաչողական գիտելիքների հարստացման տեսանկյունից ինքնուրույն ընթերցանությունը, կարևոր դեր ունի:

Հետազոտության նպատակն է բացահայտել ինքնուրույն (կամ արտադասարանական) ընթերցանության դերը կրտսեր դպրոցականների ճանաչողական գիտելիքների հարստացման և ճանաչողական ունակությունների զարգացման գործում և առաջադրել ինքնուրույն ընթերցանության միջոցով ճանաչողական գիտելիքների համալրման նոր ու արդյունավետ մոտեցումներ:

ԳԼՈՒԽ 1. ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Ինչպես նշում է անգլիացի պոետ Ադիսոնը. «Ընթերցանությունը մտքի համար նույնն է, ինչ ֆիզիկական վարժությունը՝մարմնի»: Իսկ ահա հանճարեղ Չարենցը գրքերի աշխարհը անեզր տիեզերքի է նմանեցնում՝ ձոնելով գրքերի հատուկ տաղ: Մարդկության պատմության մեջ չկա մի հանճար, որ բացառի ընթերցանության ու գրքի կարևորությունը:

Վաղ տարիքից շատ ընթերցելը հիմք է հանդիսանում հետագայում ավելի բարձր մտավոր ունակություններ ունենալու: Անձի բազմակողմանի զարգացման հիմքը դրվում է կրտսեր դպրոցում: Տարրական դասարանների մայրենի լեզվի դասընթացում կարևոր բաժին է հատկացվում ընթերցանությանը: Դրա նպատակն է՝ զարգացնել կարդալու, պատմելու կարողությունները, հարստացնել խոսքն ու բառապաշարը, ճանաչողական գիտելիքները: Շատ ընթերցելը կարող է ավելի դյուրին դարձնել երեխայի շփումը շրջապատի հետ:

Գրքի նկատմամբ սեր արթնացնելը և ընթերցանությունը հաճելի ու հեշտ դարձնելը ուսուցչի պարտականությունն է: Իսկական ընթերցանությունը, ըստ Մ. Ցվետաևայի, «համագործակցությունն է արվեստում»: Ինչպե՞ս անել, որ երեխաները սիրեն ընթերցանության դասերը, որ ընթերցանության նկատմամբ հետաքրքրությունը չհանգչի: Եվ ի՞նչ անել, եթե կրտսեր դպրոցականները չեն ուզում կարդալ: Այս հարցերն այսօր մտահոգում են շատերին: Եվ սա բնական է, քանզի անհրաժեշտ է զարգացնել երեխայի միտքը, հուզական զգայունությունը, գեղագիտական պահանջմունքները և ընդունակությունները: Կարևորը՝ կարդալու կարողության ձևավորման գործընթացն այնպես կազմակերպելն է, որ նպաստի անհատի զարգացմանը, իսկ զարգացող անհատը ընթերցանության պահանջ ունենա: Կարդալու կարողությունը անհրաժեշտ պայման է, որ կարդացողը գիտակցի տեքստի «հետևում» հեղինակի ներկայացրած աշխարհընկալումը, զգացմունքները, կյանքի նկատմամբ իր վերաբերմունքը:

Ժամանակակից երեխաները կարդալու դրդապատճառներ չունեն. նրանք դժվարությամբ կարդում են միայն այն, ինչ հանձնարարվում է դասին: Ուսուցչի առաջնահերթ խնդիրը ընթերցանության ճիշտ դրդապատճառների ձևավորումն է, որը պետք է իրականացվի արտադասարանական ընթերցանության ժամերին:

Արտադասարանական ընթերցանությունն արդյունավետ է, եթե այդ դասաժամին օգտագործվում են ուսուցման ինչպես ավանդական, այնպես էլ նորարարական մեթոդներ ու հնարներ: Ընթերցանությունը մարդու հիմնական կարողություններից մեկն է, առանց որի նա աշխարհը ճանաչել չի կարող: Երեխաներին կարդալ սովորեցնելը դժվար գործ է: Ավելի դժվար է նրանց կարդալ սիրել սովորեցնելը: Ընթերցանությունը նոր գիտելիք ձեռք բերելու միջոց է: Այն երեխան, որը լավ չի կարդում, գիտելիք ստանում է մեծ դժվարությամբ. չէ՞ որ դպրոցական ուսուցումը ենթադրում է երեխաների ինքնուրույն աշխատանք, հիմնականում՝ աշխատանք գրքով: Գրքի ազդեցությունը ակնթարթային չէ. դրա համար տարիների նպատակաուղղված աշխատանք է պետք: Մշտական ուշադրությունը, թե ի՛նչ և ինչպե՛ս են կարդում երեխաները, այդ գործի հետևողական կազմակերպումն արդյունավետ է դարձնում դաստիարակչական աշխատանքը դպրոցում: Կարդալու կարողությունների զարգացման լավագույն միջոցը ինքնուրույն ընթերցանությունն է: Լավ կարդալու համար պետք է շատ կարդալ: Ընթերցանության դերը մեր օրերում արդիական հնչողություն ունի, քանի որ մատաղ սերունդը համակարգիչը գերադասում է գրքից:

Ինքնուրույն ընթերցանության արդյունավետ կազմակերպումը կարող է իրականացնել մի շարք ուսումնական նպատակներ, լուծել կրթական և դաստիարակչական խնդիրներ.[1]

1. Կձևավորվեն կարդալու կարողություններ, կապահովվի դրանց հետագա զարգացման անընդհատությունը:
2. Հայոց լեզվի գործնական ուսուցում կիրականացվի (ճիշտ ընտրված նյութը հնարավորություն կտա սովորեցնելու նոր բառեր, արտահայտություններ, որոնք կյուրացվեն և գործածության մեջ կդրվեն երեխաների խոսքի մեջ):
3. Կհարստանան երեխաների աշխարհաճանաչողական գիտելիքները:

[1] Горецкий, В.Г. О методике обучения чтению / В.Г. Горецкий // Начальная школа. – 2007. - № 5. – С. 63-64

4. Կիրագործվի երեխաների համակողմանի դաստիարակությունը (ընկերասիրություն, աշխատասիրություն, հոգատարություն, լավատեսություն՝ տպավորիչ օրինակների, գեղեցիկ խոսքի միջոցով):

Հավելենք, որ ինքնուրույն ընթերցանության ժամանակ սովորողների բարոյական դաստիարակության խնդիրների լուծման գլխավոր պայմանը սովորողների գրական ստեղծագործությունը խորությամբ վերլուծելու կարողությունն է:

Ընթերցանության դասերին աշակերտներն ուսուցչի ղեկավարությամբ կարդում են գրական ստեղծագործություններ: Ստեղծագործության գեղագիտական և բարոյական արժեքներն ընկալելու համար անհրաժեշտ է, որ դասի ընթացքում նրանք[2]՝

- ✓ խորհեն ընթերցածի շուրջ,
- ✓ ապրումակցեն հերոսներին,
- ✓ գնահատեն նրանց արաքները,
- ✓ իմաստավորեն նրանց խնդիրները,
- ✓ համեմատեն իրենց կյանքը գրական հերոսների կյանքի հետ,
- ✓ ձգտեն կատարելու իրենց ընկալած բարոյական նորմերին համապատասխան արարքներ:

Ինքնուրույն ընթերցանության դասերը էլ ավելի հետաքրքիր կդառնան, եթե օգտագործվեն այնպիսի հնարներ, որոնք կունենան ճանաչողական, ուսուցողական նշանակություն ու միաժամանակ կխթանեն աշակերտների ստեղծագործական միտքն ու երևակայությունը: Դա երեխաների կողմից սիրված և հոգեհարազատ խաղն է: Խաղը երեխաների մտավոր ակտիվության դաստիարակման արժեքավոր միջոց է: Այն երեխաների մեջ կենդանի հետաքրքրություն է առաջացնում, զարգացնում է ճանաչողությունը՝ օգնելով յուրացնել ցանկացած նյութ: Ընթերցանությունը էլ ավելի հետաքրքիր դարձնելու համար անհրաժեշտ է գտնել ընթերցանության այնպիսի հնարներ, որոնք ոչ միայն ցանկալի ու հետաքրքիր լինեն երեխաների համար, այլև ունենան

[2] Бодрова, И.В. Развитие читательской самостоятельности у младших школьников / И.В. Бодрова // Начальная школа. – 2008. - № 8. – С. 38-41

ուսուցողական, ճանաչողական նշանակություն և միաժամանակ խթանեն աշակերտների ստեղծագործական միտքը:

Ընթերցանության գործընթացում կիրառվող խաղերին ներկայացվում են որոշակի մանկավարժական պահանջներ: Դրանցից ելնելով՝ անհրաժեշտ է խաղն այնպես ընտրել, որ այն համապատասխանի ուսումնասիրվող թեմային, աշակերտների տրամադրություններին ու տարիքային առանձնահատկություններին, ինչպես նաև օգնի՝ճիշտ ըմբռնելու բովանդակությունը:

ԳԼՈՒԽ 2. ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ

Տարրական դպրոցում մայրենիի դասի գլխավոր նպատակները երեխաներին կարդալու բոլոր որակական հատկանիշների պահպանմամբ կարդալ սովորեցնելն է, ընթերցանության նկատմանբ հետաքրքություն առաջացնելը և ընթերցողական կարողությունների ձևավորումը: Անշուշտ, եթե ձևավորված է կարդալու կարողությունը, ապա ընթերցած բնագրի շուրջ տարվող մեթոդական ճիշտ աշխատանքի շնորհիվ ընթերցանությունը դառնում է նաև անձի զարգացման միջոց: Այդ իսկ պատճառով ուսուցման սկզբնական փուլում հիմնական ուշադրությունը դարձվում է կարդալու, մասնավորապես հասկանալով կարդալու կարողության ձևավորմանը:

Բնագրի առաջին ընթերցման ժամանակ աշակերտները ընթերցած նյութի բովանդակության մասին ընդհանուր, մակերեսային պատկերացում են կազմում: Այդ պատճառով էլ կարևոր է բնագրի՝ որոշակի հանձնարարականներով վերընթերցումը, որի ժամանակ երեխաները պետք է ինչ-որ նորություն գտնեն, բացահայտեն նոր փաստեր, որոնք առաջին ընթերցման ժամանակ չէին նկատել, հակառակ դեպքում վերընթերցումը կվերածվի մեխանիկական ու անհետաքրքիր աշխատանքի: Որպեսզի բացատրական ընթերցանության մեթոդով կազմակերպվող դասն անարդյունավետ և ձանձրալի չլինի, կարևոր է իմանալ նրա բաղադրամասերից յուրաքանչյուրի առանձնահատկությունը:

Վաղ տարիքից շատ ընթերցելը հիմք է հանդիսանում հետագայում ավելի բարձր մտավոր ունակություններ ունենալու: Մարդու բազմակողմանի զարգացման հիմքը դրվում է կրտսեր դպրոցում: Տարրական դասարանների մայրենի լեզվի դասընթացում կարևոր բաժին է հատկացվում ընթերցանությանը: Դրա նպատակն է՝ զարգացնել կարդալու, պատմելու կարողությունները, հարստացնել խոսքն ու բառապաշարը, ճանաչողական գիտելիքները: Շատ ընթերցելը կարող է ավելի դյուրին դարձնել երեխայի շփումը շրջապատի հետ:

Տարրական դասարաններում առավել նախընտրելի է հանձնարարել աշակերտներին ընթերցել հեքիաթներ, առակներ, բանաստեղծություններ, անվանի մարդկանց մասին և նրանց մասին ասույթներ, պատմվածքներ, հայրենիքի նշանավոր մարդկանց մասին տեղեկություններ, լեգենդներ, ավանդազրույցներ և այլ փոքր ծավալի ստեղծագործություններ:

Ընթերցելու կարողությունը հնարավոր է զարգացնել՝ օգնելով երեխային տեքստն ընկալել քայլ առ քայլ: Հենց սա էլ անում է մեթոդը: Այն հնարավորություն է տալիս մոդելավորել ընկալումը խթանող ընթերցանության գործընթաց՝ երեխաների հետ քայլ առ քայլ առաջ գնալով տեքստի հատվածներով, վերլուծելով և եզրահանգումներ անելով: մեթոդով աշխատելու համար շատ կարևոր է ընտրել այնպիսի տեքստ, հեքիաթ կամ պատմություն, որին երեխաները ծանոթ չեն:

Տեքստը պետք է բաժանել տրամաբանական մի քանի մասերի, յուրաքանչյուր մասից հետո դադար է տրվում, որի ժամանակ պետք է որոշակի հարցադրումներով խթանել քննարկումը: Կարևոր է, թե որտեղ կընդհատվի հեքիաթը, որպեսզի սովորողը կարողանա հետաքրքիր ընթացք հորինել և հետաքրքրությամբ ու անհամբերությամբ սպասել հաջորդ հատվածին: Իր գրածը և բնագիրը համեմատելու ցանկությունը սովորողի մոտ հեքիաթի շարունակությունը ընթերցելու լրացուցիչ խթան է հանդիսանում: Երեխաների միտքը և երևակայությունը անսահման են, հորինած պատմությունները՝ հետաքրքրի ու անսովոր:

Կարևոր է, որ երեխան կարողանա սեփական միտքը ձևակերպել՝ գտնել համապատասխան բառեր, արտահայտություններ, ապա գրանցել, իսկ հետո՝ ներկայացնել: Երեխաները պակաս հետաքրքրությամբ չեն լսում իրենց հասակակիցների հորինած պատմություններն ու հեքիաթները: Երեխաներին հասակակիցների ստեղծագործություններն ավելի են հետաքրքրում ու զարմացնում, ծիծաղեցնում ու ոգևորում: Հորինած պատմությունը գրելուց հետո երեխան այն ներկայացնում է՝ կարդում, նկարում, պատրաստում իր հեքիաթի նկարազարդ էջը: Մյուս երեխաները հետաքրքրությամբ լսում են, հարցեր տալիս հենց հեղինակին: Հեքիաթի հորինումը կարելի

է կազմակերպել կշռադատման փուլում, երբ երեխաները ամփոփում են իրենց ընթերցած պատմությունը կամ հեքիաթը և վեր են հանում հանում գլխավոր միտքը:

Մայրենիի ուսուցման մեթոդիկայում ներկայացված են այն մանկավարժական հիմնական պայմանները, որոնք անհրաժեշտ է ապահովել սովորողի խոսքային գործունեության ժամանակ: Դրանք հետևյալներն են.

1. Խոսելու և խոսակցին ունկնդրելու ցանկություն՝ այսինքն՝ խոսելու պահանջմունք: (Մարդը խոսում է, երբ խոսելու կարիք ունի. երբ աշակերտը խոսում է, պատմում, կարիք չկա նրան սաստել կամ ընդհատել):
2. Խոսելու նյութի առկայություն. խոսքը կառուցելուց առաջ, պետք է սովորողն ունենա տեղեկություններ նյութի մասին: (Նկատի ունենալ, թե որքանով է հետաքրքիր և ուշագրավ, իսկ փաստերը՝ արժեքավոր և հիմնավոր):
3. Խոսքի ընդունված կանոններով սովորողներին զինելը, երեխաներին տալ խոսքի օրինակելի նմուշներ: (Խոսքի օրինակելի նմուշներն երեխաները ստանում են ընտանիքում, դպրոցում, գեղարվեստական ստեղծագործություններից, որոնք նրանք կարդում են, ունկնդրում):
4. Հասկանալ այն ամենը, ինչի մասին խոսվում է, ընկալել խոսքի տրամաբանությունը: (Առանց խոսելու նյութի հասկացման, հնարավոր չէ բովանդակային խոսք կառուցել):
5. Տարբերել գործող անձերի տրամադրությունը և այն ներկայացնել ինչպես ձայնային, այնպես էլ լեզվական արտահայտչամիջոցներով:
6. Ապահովել կապը ունկնդրի հետ: (Խոսելիս հետևել արդյոք մարդիկ քեզ լսու՞մ են, հասկանու՞մ, հետաքրքիր՞ր է, չե՞ն ձանձրանում, ընտրել համապատասխան բառապաշար, խոսել պարզ լեզվով):

Մեր մանկավարժական գործունեության ընթացքում մենք ձգտում ենք ոչ միայն մշտապես ապահովել այս մանկավարժական պայմանները, այլև հետամուտ լինել սովորողների կողմից դրանցից յուրաքանչյուրի իմացությանն ու կիրառմանը:

Մեր տարիների փորձով համոզվել ենք, որ սովորողների բանավոր խոսքն արտացոլում է նրանց ներաշխարհը, մտքերը, անհանգստությունները, հոգեբանությունը: Սա մենք համարում ենք չափազանց կարևոր և մայրենիի դասերի ընթացքում փորձում ենք ստեղծել այնպիսի մանկավարժական պայմաններ, այնպիսի հուզական մթնոլորտ, որոնք կնպաստեն ազատ, անկաշկանդ հարաբերությունների, խոսելու, պատմելու, արտահայտվելու սովորողների պահանջմունքների դրսևորմանը:

Կրտսեր դպրոցականների բանավոր խոսքի զարգացման ուղղությամբ աշխատանքները մենք մշտապես իրականացնում ենք նկարների դիտարկման, այլ օբյեկտների ցուցադրման, զրույցի, գեղարվեստական տեքստերի ընթերցանության, բեմադրությունների, երկխոսությունների, բանավեճերի, իրադրային խաղերի ճանապարհով՝ հաշվի առնելով բազմաթիվ և բազմաբնույթ գործոններ. հակառակ դեպքում իրականացրած յուրաքանչյուր խոսքային գործունեություն կարող է դառնալ աննպատակ:

Ինքնուրույն ընթերցանության դասի ժամանակ կան մեթոդներ, որոնք հարմար են կիրառել խթանման փուլում[3]՝

- ✓ Մտագրոհ,
- ✓ Խմբավորում,
- ✓ Պրիզմա,
- ✓ Հինգ րոպեանոց շարադրանք,
- ✓ ԳՈՒՍ աղյուսակի առաջին և երկրորդ սյունակները:

Այս մեթոդներն ու մեթոդական հնարները կօգնեն ընթերցանության ուսուցմանը: Հարմար են կիրառել իմաստի ընկալման փուլում հետևյալ մեթոդները՝

[3] Жесан, О.Б. Формирование читательской компетентности младших школьников / О.Б. Жесан // Школьная библиотека. - 2010. - № 5. – С. 24- 26.



Գծապատկեր 1. Իմաստի ընկալման փուլում կիրառվող մեթոդները

Այս մեթոդները հարմար է կիրառել ոչ միայն ինքնուրույն ընթերցանության ժամանակ, այլ նաև մայրենիի դասերին: Կշռադատման փուլում հիմնականում կիրառվում են հետևյալ մեթոդները՝

- ✓ Քառաբաժան,
- ✓ Կողմ-դեմի աղյուսակ,
- ✓ Խմբային աշխատանք,
- ✓ Բանավեճ:

Ընթերցանության ժամանակ և գրքի հետ աշխատելիս կարելի է կիրառել տարբեր մեթոդներ, կախված նյութի բովանդակությունից և նպատակից:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Լինելով Ջերմուկի Մ. Գորկու անվան դպրոցի տարրական դասարանի դասվար, սովորողների շրջանում իրականացվել է հետազոտություն, որի նպատակն էր քննարկել ինքնուրույն ընթերցանության կազմակերպման մեթոդների անհրաժեշտությունը, ինչպես նաև բացահատել այդ մեթոդների կիրառման արդյունավետությունը: Հետազոտությունն իրականացվել է երկրորդ դասարանում, որն ունի 21 աշակերտ:

Ինքս ամեն օր բարձրաձայն կարդում եմ երեխաների համար՝ ընթերցանության նկատմամբ սեր առաջացնելու նպատակով: Ժամանակ եմ տրամադրում նրանց ինքնուրույն ընթերցելու և գրելու, հաղորդակցվելու միմյանց հետ՝ կիսելով կարդացածի և գրածի մասին իրենց տեսակետները: Համատեղ և ուղղորդված ընթերցանության դասերը, որևէ թեմայի շուրջ գրավոր խոսք կառուցելը և դա մյուսներին ներկայացնելը երեխաներին մղում է համարձակ ձևով ինքնարտահայտվել, սիրել գիրքը, լինել ուշադիր ունկնդիր, հարցեր առաջադրել, շարադրել սեփական մտքերը և հասկանալ գրածի իմաստը:

Կարևոր է, որ երեխաների առաջին ջանքերը խրախուսվեն ուշադիր ու հոգատար ուսուցչի կողմից: Նա երեխաների համար պետք է ստեղծի տպագիր նյութերով հարուստ միջավայր: Գրքերը և այլ տպագիր նյութերը դասարանում մշտապես օգտագործվող դիդակտիկ պարագաների շարքում պետք է առաջին տեղում լինեն: Իմ դասարանական գրադարանում ընթերցանության համար հարուստ նյութեր կան: Գունավոր պաստառները, աշակերտների հասակին համապատասխան կահույքը գրավում է երեխաներին, և նրանք ավելի հաճախ ու հաճույքով են կարդում:

Գրադարանն ունի պատմվածքների, հեքիաթների, պիեսների, բանաստեղծությունների լայն ընտրանի: Այն նպաստավոր է թե՛ մեծ խմբով, թե՛ փոքր խմբերով և թե՛ անհատական ընթերցանություն կազմակերպելու համար:

Իմ դասասենյակը լիովին համապատասխանում է խմբերով ընթերցանության կազմակերպմանը, խմբերի համար անհրաժեշտ նյութերի տեղադրմանը և աշակերտների միջև (դեմ առ դեմ) փոխներգործության կազմակերպմանը:

Այս անգամ ընտրել էի Գ. Մովսիսյանի «Ազնվություն»-ը: Ինքնուրույն ընթերցանության դասերին ես հաճախ եմ կիրառում ուղղորդված ընթերցանության մեթոդը: Խթանման փուլում աշակերտներին բաժանում եմ 4 խմբի: Աշխատում եմ աշակերտների փոքր խմբերի հետ/ ընդգրկում եմ 5-6 աշակերտի/:

Ամենօրյա դիտարկումների արդյունքում ես արդեն պարզել եմ յուրաքանչյուրի կարողություններն ու անհատական կարիքները, և միանման կարողություններ ունեցող սովորողների խմբեր ձևավորելն ինձ համար դժվարություն չի ներկայացնում: Խմբերի այս տեսակ ձևավորումն ունի իր նպատակը՝ ընտրված գիրքը համապատասխանում է տվյալ խմբի անդամների ընթերցողական մակարդակին: Իմ աշակերտների մեծ մասը վարժ և արագ է կարդում, մյուսները՝ քիչ դանդաղ, մի քանիսն էլ դժվարությամբ:

Եթե ես ամբողջ դասարանին հանձնարարեմ կարդալ նույն տեքստը, ապա մի մասն արագ կկարդա ու կավարտի, հետո ձանձրույթից կսկսի խանգարել մյուսներին: Անշուշտ, դասարանում աղմուկ կտիրի, և աշխատանքն իր նպատակին չի ծառայի: Կարևոր է նաև, որ խմբերն ընթերցանությունն ավարտեն միաժամանակ: Դա հնարավորություն է տալիս խուսափել ավելորդ աղմուկից: Յուրաքանչյուր խմբի ներկայացնում եմ նախապես ընտրված գիրքը, որը, իմ կարծիքով, համապատասխանում է խմբի անդամների ընթերցանության մակարդակին:

Ընթերցելու ընթացքում մոտենում եմ խմբերին՝ նրանց ուշադրությունը հրավիրելով այն մանրամասների վրա, որոնք երեխաների համար կարող են դժվարություն ներկայացնել. օրինակ՝ բառաշարը, քերականական առանձնահատկությունները, բառի իմաստը, կերպարների վերլուծությունը: Խմբերին մոտենում եմ միայն այն դեպքերում, երբ իմ օգնության կարիքը կա: Սակայն հնարավոր է նաև, որ իմ օգնության կարիքը չզգացվի, քանի որ ընտրված գիրքը լիովին համապատասխանում է խմբի երեխաների մակարդակին, և աշակերտներն ի վիճակի են ինքնուրույն ընկալել ստեղծագործության բովանդակությունը:

Իմաստի ընկալման փուլում բանավեճի մեթոդով, փորձում եմ հասկանալ յուրաքանչյուր աշակերտի պատկերացումներն ազնվության վերաբերյալ: Նրանց ուղղում եմ հետևյալ հարցերը.

- ✓ Ինչու՞ է հեղինակը անվանել պատմվածքը «Ազնվություն»,
- ✓ Ի՞նչ է Ձեզ համար ազնվությունը
- ✓ Վարդանի կողմնակիցները ներկայացնեն իրենց տեսակետները, իսկ Մարտինի կողմնակիցները իրենցը:

Կշռադատման փուլում կազմակերպում եմ դերային խաղ, որի նպատակն է զարգացնել երեխաների մոտ ստեղծագործական միտքը, ազատ խոսքը, ինչպես նաև սեփական կարծիքն արտահայտելու հնարավորութունները:

Անդրադարձ և ամփոփում-«Ընթերցողից պատասխան ակնկալող հարցեր» մեթոդական հնարի կիրառմամբ, սովորողներին եմ տալիս հետևյալ հարցերը.

- ✓ Ի՞նչ նկատեցիք տեքստում,
- ✓ Ինչի՞ մասին այն ստիպեց մտածել,
- ✓ Ո՞րն է տեքստի ամենակարևոր ասելիքը,
- ✓ Ո՞րն է տեքստի ամենակարևոր նախադասությունը,
- ✓ Ո՞րն է տեքստի ամենակարևոր բառը:

Այսպիսով՝ ընթերցանության ձևավորումն ու զարգացումը կրտսեր դպրոցում խաղի միջոցով ունի շատ մեծ և կարևոր նշանակություն: Այս աշխատանքի միջոցով պարզեցինք ընթերցանության կարևորությունը, ընթերցողական հետաքրքրությունների ձևավորումը, ի՞նչ ընթերցել, խաղի միջոցով ընթերցանության զարգացումը: Տարրական դասարաններում աշակերտների համար անհրաժեշտ է ընթերցանության առկայությունը: Տարրական դասարաններում պետք է նպաստել աշակերտների ինքնուրույնության զարգացմանն ուսումնառության ընթացքում, միաժամանակ սովորեցնել հաղորդակցվել ու համագործակցել դասընկերների հետ, զարգացնել աշակերտների տրամաբանական մտածողությունը: Այդ ամենը արդյունավետ իրականացնելու համար մեծ դեր ու նշանակություն ունի ընթերցանությունը: Սակայն նախ և առաջ պետք է աշակերտների մեջ ձևավորել ընթերցանությանը տիրապետելու կարողություններ, հետաքրքրասիրություն դեպի ընթերցանությունը: Ընթերցանության շնորհիվ զարգանում է երեխայի խոսքը, ավելանում է նրա բառապաշարը: Գիրքը փոքրիկ ընթերցողին սովորեցնում է արտահայտել իրենց մտքերը և հասկանալ, թե ինչ են ասել ուրիշները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Տարրական դասարաններում կարևորվում է ինքնուրույն ընթերցանությունը: Ես ամեն օր ընթերցում եմ նրանց համար, օրինակ եմ ծառայում, ուղղություն տալիս, ցուցադրում և, զանազան այլ ռազմավարությունների կիրառմամբ, սեր եմ արթնացնում ընթերցանության նկատմամբ: Աշխատում եմ երեխաների ուշադրությանը ներկայացնել ինչպես հարազատ մշակույթից, այնպես էլ այլ մշակույթներից կամ ավանդություններից վերցված հանրահայտ ստեղծագործություններ: Ընտրում եմ այնպիսի գործեր, որոնք կարող են բորբոքել երեխաների երևակայությունը, բուռն զգացմունքների տեղիք տալ և համապատասխա նում են նրանց տարիքին ու փորձառությանը:

Մեր մանկավարժական փորձը և կատարած հետազոտական աշխատանքը թույլ է տալիս եզրակացնել՝

- ✓ Ընթերցողական նախագծերը նպաստում են լեզվամտածողության զարգացմանը
- ✓ Սովորողներին ընթերցանությունը օգնում է բանավոր և գրավոր խոսքում
- ✓ Հեղինակային մանկավարժությունը խթանում է ընթերցանությունը
- ✓ Հեղինակային մանկավարժությունը լայն գործիքակազմ է տրամադրում ընթերցանությունը զարգացնելու և խրախուսելու համար
- ✓ Ընթերցողական նախագծերը կրտսեր դպրոցում մեծ կարևորություն ունեն և՛ սովորողների, և՛ ընտանեկան դպրոցների համար
- ✓ Ընտանեկան դպրոցները ներգրավված են ընթերցողական նախագծերում
- ✓ Ընթերցողական-համագործակցային նախագծերը խթանում են սովորողների հետաքրքրությունը գրքի նկատմամբ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գյուլամիրյան Ջ. Հ. , Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, «Զանգակ – 97», 2006:
2. Տեր-Գրիգորյան Ա. Ե., «Ընթերցանության մեթոդիկա», «Լույս», 1987:
3. Կարինե Թորոսյան, Կարինե Չիբուխչյան, Աստղիկ Բալայան «Ինչպես պլանավորել մայրենիի դասը» «Զանգակ», 2017թ.
4. Артамошина, Е. Н. Дети и книга. Простые приемы привлечения к чтению / Е.Н. Артамошина // Школьная библиотека. - 2010. - № 5. – С. 21-23.
5. Бодрова, И.В. Развитие читательской самостоятельности у младших школьников / И.В. Бодрова // Начальная школа. – 2008. - № 8. – С. 38-41
6. Бородина, В.А. Технологии читательского развития. Летняя школа чтения / Бородина В.А., Бородин С.М. // Школьная библиотека. – 2010. - № 3-4. – С. 104–112.
7. Горецкий, В.Г. О методике обучения чтению / В.Г. Горецкий // Начальная школа. – 2007. - № 5. – С. 63-64
8. Жесан, О.Б. Формирование читательской компетентности младших школьников / О.Б. Жесан // Школьная библиотека. - 2010. - № 5. – С. 24- 26.
9. Свиридова Л.А. «Литературное образование младших школьников». // «Начальная школа плюс до и после». 2005 - № 10, С - 62-66.